# «ԼԱՎՈ» ՍՊԸ

ք.Երևան, Փ.Բուզանդի փող. 1/3, 6-րդ հարկ

հեռ. (091) 56-12-22
lavollc@mail.ru
lavo.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000479, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-09-04, «ԼԱՎՈ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ Փ., 1/3, 6-ՐԴ ՀԱՐԿ

Գործողության ժամկետը՝ 04.09.2029թ.

ՀԻՓԻՉ ՀԱՄԱՐ DGCF FTCB 6AF6 DCFC

*ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 000479, 1-ին դաս*

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն Ա.Սահակյան

«16» դեկտեմբերի 2025թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 1032-25

### «Ս.Մուրադյանի «Սասունցիներ» որմնանկարի վերականգնում, ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Այգաշ համայնք» նախագծանախահաշվային փաստաթղթերի

**ՆԱԽԱԳԾՈՂ՝** ««ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

*Նախագծման հիմքը՝ Տեխնիկական առաջադրանք*

# *ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԱՍ*

Փործաքննության է ներկայացված ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ապագա հասցեում գտնվող Ս.Մուրադյանի «Սասունցիներ» որմնանկարի վերականգնման աշխատանքային նախագծի ճարտարապետական մասը:

Վերականգնվող նախագիծն Ս.Մուրադյանի 1974թ նկարված «Սասունցիներ» որմնանկարն է, որն 2016թ ՀՀ Մշակույթի նախարարության կողմից ներառվել է հանրապետության նշանակության նորահայտ հուշարձանների ցանկի մեջ:

Այն գտնվում է Արմավիրի մարզի, Ապագա գյուղի խորհրդային ժամանակաշրջանում կառուցված մշակույթի տան նախասրահում՝ 20-րդ դարի երկրորդ կեսի կառույցի մեջ:

Վերականգնման հիմք է հանդիսանում որմնանկարի ուսումնասիրման, պահպանման, մասնակի հատվածների վերականգնման, վերստեղծման նախագծի բովանդակային կատարումը՝ ըստ հեղինակային գեղագիտական հորինվածքի, որպեսզի գեղագիտական և կոնստրուկտիվ վերականգնումն լինի մաքսիմալ հարատև:

«Սասունցիներ» որմնանկարի վերականգնման մշակված մեթոդն, լիցենզավորված նյութերի օգտագործման տեխնիկան և պատրաստման մեթոդն վերցված իտալական հեղինակավոր «Պալացցո Սպինելի» որմնանկարի վերականգնման ինստիտուտից:

Տարիների ընթացքում այս վերականգնման մեթոդով՝ իտալացի վերականգնողների հետ համատեղ, Հայաստանում հաջողությամբ վերականգնվել են տասնյակ նմանատիպ հուշարձաններ:

Հարկ է նշել, որ այս մեթոդն կիրառելի է որմնանկարի պահպանման, վերականգնման և վերստեղծման համար նախատեսված A Fresco և Buono Fresco-ների համար /դասական թաց և խառը տեխնիկայով կատարում/:

Մասնակի կամ ընդհանուր նյութատեխնիկայի օգտագործումն կախված է հուշարձանի թվագրման, վերականգնման առկա խնդիրների մոտեցումից:

Հիմնվելով տվյալ մեթոդի արդյունավետության և հուսալիության վրա՝ ակնառու կերպով հավաստի հիմք է հանդիսանում տարիների ընթացքում վերականգնված որմնանկարների երկարակեցությունը:

Նախագծի ճարտարապետական մասը կատարված է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծի ճարտարապետական մասի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

## ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ապագա հասցեում գտնվող Ս.Մուրադյանի «Սասունցիներ» որմնանկարի վերականգնման աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվները կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ նախագծային ծավալների հիման վրա:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. գնահաշվարկով և վերահաշվարկված են 2025թ. գներով ընդունելով 1ռ=2437.02՝ աշխատավարձի մասով, 1ռ=3074.10՝ մեքենա-շահագործման մասով:

Շին. նյութերի արժեքը վերցված է ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2025թ. հոկտեմբեր ամսվա ինֆորմացիոն տեղեկագրից: Այն շին.նյութերի, սարքավորումների արժեքները, որոնք բացակայում են ինֆ. տեղեկագրից, կապալառու կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխան հաշիվ ապրանքագրեր:

Նյութերի արժեքների վրա կիրառված է՝

- 6.15% տրանսպորտային ծախսեր,
- 5% նորմերում չնախատեսված այլ նյութերի ծախսեր,
- 2% պահեստավորման ծախսեր:

Ուղղակի ծախսերի վրա տրված է՝

- 13.3% վերադիր ծախսեր,
- 11% շահույթային ծախսեր:

Ըստ հավաք նախահաշիվների լիմիտավորված տոկոսադրույքների, ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է. ***8 887,20 հազ. դրամ***, այդ թվում ԱԱՀ ***1 481,20 հազ. դրամ:***

Ըստ սույն փորձաքննության՝ շինարարության ընդհանուր արժեքը՝ ***8 887,20 հազ. դրամ*** երաշխավորվում է հաստատման:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լավո» ՍՊԸ փորձաքննությունը երաշխավորում է «Ս.Մուրադյանի «Սասունցիներ» որմնանկարի վերականգնում, ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ապագա հասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝ Կ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ